



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1099

Հ Ր Ա Հ Ա Ն Պ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ


ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՔԱՐԱՆԱՑ

ՎԱՐԵՐԱՑԵԱԼ

Ի ԿՐՈՆԱԿԱՆ ԵԽ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽԱՌՆ ՔԱՂՈՎՈՅ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



Հ Ա Յ Ա Հ Ա Ն / 25



ԱՅԼՈՎԱՐԴՆԱՆԱՏԱՍԽԱՆ
ՏՊԱՐՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

1873



Ա.Զ.Դ

Ալդային վարժարանաց բարեկարգութեան համար
Ուսումնական խորհրդոյ պատրաստած սոյն Հրահանգը
Նկատողութեան առնլով Խառն ժաղովը , քանի մը փօփո-
խութեամբ ընդունեց և վաւերացուց , և որոշեց տպագ-
րութեամբ հրատարակել և հրաւիրել թէ Մայրաքաղա-
քիս և թէ Գաւառաց Թաղական խորհուրդները և վար-
ժարանաց Հոգաբարձութիւնները և Խնամակալութիւն-
ները , որ սոյն Հրահանգին համեմատ իրենց խնամոց ներ-
քեւ գտնեւած ազդային վարժարանաց բարեկարգութեա-
նը հոգ տանին . և փորձառութեամբ ստացած դիտողու-
թիւննին բարեհամեմ տեղեկագրել առ Ուսումնական
խորհուրդն Կեդրոնական Վարչութեան . որպէս զի ՚ի պա-
հանջել հարկին սոյն Հրահանգը վերաքննուի և վերստին
հրատարակուի :

Բայց մինչեւ այն տոեն սոյն Հրահանգն ամբողջ պիտի
գործադրուի , և թէ Մայրաքաղաքիս և թէ Գաւառաց
Թաղական խորհուրդը և վարժարանաց Հոգաբարձու-
թիւնը և Խնամակալութիւնը պարտաւոր են ըստ այսմ
վարուելու :

17 Յուլիս 1873

՚ի Պատրիարքարանի Հայոց

՚ի Կ. Պոլիս

Ն Ա. Խ Ա. Գ Ա. Հ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԳՐՈՒՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՊԱՏՏԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈՅՑ

ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՐԻՍԵԱՆ

Դիոսկ Կրտսեական ժողով

ԱՏԵՆԱԴՊԻՐ

ԱՏԵՆԱՊԵՏ

Մ. Վ. ԽԶՄԻՐԼԵԱՆ

ԹԱԴԿՈՍ ԵՊԽՍԿՈՊՈՅ

Դիոսկ Պաղաքական ժողով

ԱՏԵՆԱԴՊԻՐ

ԱՏԵՆԱՊԵՏ

Մ. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

ՍԵՆԵՐԵՐԻՄ Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



28. 1174

41125-60

ՀՐԱՀԱՆՈՂ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

Ա.

ՎԱՐԺԱՐԱՆ

1. Ազգային վարժարանները երկու տեսակ են

Ա. Ամսակրթարան կամ նպանական վարժարան .

Բ. Ռիսութարան կամ երկրորդական վարժարան :

Կախակրթարանի մասն է ընտելարանը , որ ծաղկոց ալ կ'ըսուի :

2. Սցի վարժարանները թէ առանձինն և թէ մի և նոյն յարկի տակ կընան ըլլալ :

3. Երբ մի և նոյն յարկի տակ ըլլան , ըստ կարելոյն հոգ տանելու է որ Ուսումնարանը բաժանեալ ըլլայ նախակրթարանէն . իսկ Ընտելարանը միշտ բաժանեալ պիտի ըլլայ առանձին սրահով կամ սենեակով :

4. Վարժարանաց չենքը և այլ ամեն կարգադրութիւնները պէտք է որ ըլլան ողջպահիկ կանոնաց համեմատ : Ուստի նոր շինուելիք վարժարանի յատակագիծը պէտք է ներկայացնել Ուսումնական խորհրդոյ . և անոր հաւանութիւնն ստանալ . իսկ արդէն շինուածներն ալ պէտք է ըստ կարելոյն յարմարցնել ողջպահիկ կանոնաց :

5. Ամէն թաղ կամ գիւղ իր վարժարանաց մէջ Ծնտելարանի և Նախակրթարանի ուսմունքը պարտաւորիչ պի-

տի ընէ թէ մանկանց և թէ աղջկանց . և եթէ ձեռնշտառ
է՝ Ռւսումնարանի սահմանեալ ուսմունքն ամբողջ և կա-
նոնաւոր կերպով պիտի աւանդէ :

Իսկ եթէ անձեռնհասէ , և այնպէս ըլլուլը հաստատ-
ուած է Ազգային վարչութենէն , ան առեն ուրիշ մեր-
ձակայ թաղերու կամ գիւղերու հետ միանալով պէտք է
որ կեդրոնական Ռւսումնարան մը հիմնելու հոգ տանի :

Իսկ եթէ այս ալ ընել անկարելի կամ դժուարին ըլլուց ,
պարտական է գէթ Ռւսումնարանի առաջին երեք տարի-
ներու ուսմունքն աւանդէլ :

Եւ եթէ այս մասին որ և է փոփոխութեան կամ տնօ-
րմնութեան հարկ տեսնէ , պէտք է որ դիմէ Ուսու մնա-
կան խորհրդոյ հաւանութեանը :

Բ.

ՈՒՍՄՈՒՆՔ

6. Ընկը լարանի մէջ կ'աւանդուին
Ընթերցանութիւն .

Գիր .

Թուանշան ճանաչել ու գրել .

Քրիստոնէական հրահանգ և տէրունական աղօթք բանիւ :

7. Աստիակրանի մէջ կ'աւանդուին
Քրիստոնէական վարդապետութիւն ըստ դաւանութեան
Հայաստանն այց ու զղափառ Ս. Եկեղեցւոյ . և Սրբազն
պատմութիւն հին և նոր կտուկարանոց .

Բարսյական ազգային և ընտանեկան կրթութիւն .

Ազգային գրաբառ լեզու , կամ Հայկաբանութիւն ,
ցթարգմանութիւն Ս. Աւետարանի .

Ազգային պատմութիւն՝ հանդերձ Հայաստանի աշխար-
հագրութեամբ .

Տարեբք Թուագիտութեան .

Տարեբք Աշխարհագրութեան .

Եկեղեցական երգեցողութիւն .

Դժագրութիւն :

(Տես Հրահանգ Թաղ. Խորհրդոյ յօդ. 33—34—35)

8. Աշխարհագրութիւնի մէջ պէտք է որ աւանդուին նաև
Հողագործական գիտելիք , Պարզ Տոմարակալութիւն ,
Մարմամարզութիւն և Ազգային երգք :

9. Ուսումնարանի մէջ կ'աւանդուին

Քրիստոնէական վարդապետութիւն և Կրօնագիտութիւն ,
Հանդերձ պատմութեամբ Հայաստանեայց ուղղա-
փառ Ս. Եկեղեցւոյ .

Բարսյական՝ ազգային և ընտանեկան կրթութիւն և Ա-
ռաղջաբանութիւն .

Ազգային գրաբառ լեզու , կամ Հայկաբանութիւն .

Պատմութիւն .

Սկզբունք Քանակագիտութեան .

Աշխարհագրութիւն .

Լեզուագիտութիւնք . (Տաճկերէն, Գաղղիերէն ևն.)

Սկզբունք Բնական պատմութեան ,

” Բնագիտութեան

” Տարրագիտութեան

” Տնտեսագիտութեան ,

” Մեքենաբանութեան ,

” Փիլիսոփայութեան .

Տոմարակալութիւն .

Զեագրութիւն .

Եկեղեցական երգեցողութիւն՝ հանդերձ ձայնագրու-
թեամբ .

Ազգային երգք՝ հանդերձ ձայնագրութեամբ .

Գեղագրութիւն .

Ասղնեգործութիւն :

ԲԱՇԽՈՒՄՆ ՈՒՍՄԱՆՑ

10. Ընդուլարանի ուսմունքը սկիզբէն շարունակաբար կ'աւանդուին փոփոխակի կարգով մը, մերթ ընթերցման, մերթ գրի, մերթ աղօթքի ևն. ուսմանց պարապեցնելով տղայքը, որոնք թէ մանուկ և թէ աղջիկ միւնցն սրահի մէջ կրնան պարապիլ, 5-7 տարեկան հասակի մէջ:

11. Եսամակի ուսմունքը Յ տարեկան շրջաններու վրայ հետեւեալ կերպով կը բաշխուին:

Ա. ՏԱՐԻ (Ա. ԿԱՐԳ)

Պատմութիւն Ա. Գրոց Համառօտ:

Հայկաբանութիւն (Քերական-Ռի-Ն. Համառօտ Ա. Տառ: Ուսմական ընդունելիութեալ բառեալ) :

Ազգային պատմութիւն (Յէլլ Արշենեալաց):

Թուագիտութիւն (Զու Գրծուն-Ռի-Ն.):

Աշխարհագրութիւն (Հայաստան և Ասիա):

Բ. ՏԱՐԻ (Բ. ԿԱՐԳ)

Պատմութիւն Ա. Գրոց Համառօտ (Շարունակի-Ռի-Ն. Ա. Գրոց):

Հայկաբանութիւն (Քերական-Ռի-Ն. Բ. Տառ: և բառագիտութեալ վէրածուն-Ռի-Ն. Ա. Երաբանի կրայ: Շար. ուսմական ընդունելիութեալ բառեալ):

Ազգային պատմութիւն (Յէլլ պատմուն-Ռի-Ն.):

Թուագիտութիւն (Կոսորակ և Համարուն-Ռի-Ն.):

Աշխարհագրութիւն (Երոպա և Ասիա):

Գ. ՏԱՐԻ (Գ. ԿԱՐԳ)

Քրիստոնէ ական վարդապետութիւն Համառօտ:

Հայկաբանութիւն (Քերականական կը լու-Ռի-Ն. Ռարժանուն-Ռի-Ն. և վէրածուն-Ռի-Ն. Ո. Ա. Երաբանի: Պարագան նախական գիրելիք):

Ազգային պատմութիւն (Ընդհանուր և Հայաստան գիրելիք): Թուագիտութիւն (Ա. Երաբանի: Պարագան գրծուն-Ռի-Ն. և Պատմուն-կան աշխարհագրուն-Ռի-Ն.):

Առաջին տարիէն շարունակաբար կ'աւանդուին նաև Բարսյական՝ ազգային և ընտանեկան կրթութիւն. և Հողագործական գիտելիք. (Ամէն օր որոշում Ճամանակ Ֆջ՝ գրիպակի և ընդհանուր բանախօսուն-Ռի-Ն.):

Դիր.

Գծագրութիւն (Կը լու-Ռի-Ն. պարզ Գծա-որ օրէնսդր-Ռի-Ն. և կը պահպակ կը այ. և աղբուն-Ն. Երկարութեան գծա-գրուն-Ռի-Ն.):

Եկեղեցական երգեցողութիւն յարմարա-որ մանկան:

Ազգային երգք:

Ասղնեգործութիւն (Կար) աղջիան:

Մարմամարդութիւն՝ ողջունէ օրէնաց համեմատ. շարժման կանոնա-որէլու և ջիշտ պարագան-Ն. և կը լու-Ռի-Ն.:

12. Ազգային լեզուի և թուագիտութեան համար ամէն օր, իսկ միւս ուսմանց համար օր ընդմէջ դասախոսութիւն կ'ըլլայ, և կամ ամէն օր:

Դասերուն ակնողութիւնը սովորաբար մէկ ժամէ. կամ քիչ մասելի կամ նուազ, ինչպէս օր պատշաճ դասուի:

13. Ուսումնարանի ուսմունքը Յ տարեկան շրջաններու վրայ հետեւեալ կերպով կը բաշխուին:

Ա. ՏԱՐԻ (Ա. ԿԱՐԳ)

Հայկաբանութիւն (Քերականական գրիպակի ընդհանուր և Ռարժանուն-Ռի-Ն.):

Ե Ա Ր Լ . ը ն ո ի ր մ ա պ ե ն ա գ ր ա ց . Ն ա մ ա կ ա գ ր ո ւ լ ի ւ ն ի ա մ վ պ ի պ ա գ ր ո ւ լ ի ւ ն) :

Պ ա տ մ ո ւ թ ի ւ ն (Ա յ դ ա յ ի ն ը ն ո ւ ր յ ա լ ։ հ ա ն ո ւ ր յ ա լ ։ չ ն ա խ օ ս ո ւ լ ի ւ ա մ բ ։) :

Պ ա տ մ ո ւ թ ի ւ ն (Հ ի ն ա ղ ի ա յ ։ հ ա ն ո ւ ր յ ա լ ։ ա շ կ ա ր հ ա գ ր ո ւ լ ի ւ ա մ բ ։) :

Ս կ զ բ ո ւ ն ք Ք ա ն ա կ ա գ ի ս ո ւ թ ե ա ն (Թ ո ւ ս գ ի ր ո ւ լ ի ւ ն ը ն ո ւ ր յ ա լ ։ յ ա կ ։) :

Ա շ խ ա ր հ ա գ ր ո ւ թ ի ւ ն (Ք ա ղ ա ք ա կ ա ն ը ն ո ւ ր յ ա լ ։) :

Լ ե զ ո ւ ա գ ի ս ո ւ թ ի ւ ն ք

Տ ա ճ ի ւ ն (ը ն ո ւ ր յ ա լ ։ գ ի ր հ ա ն ո ւ ր յ ա լ ։ ո ւ շ լ ա գ ր ո ւ լ ի ւ ա մ բ ։) :

Գ ա ղ ի ւ ն (ը ն ո ւ ր յ ա լ ։ և գ ի ր հ ա ն ո ւ ր յ ա լ ։ ո ւ շ լ ա գ ր ո ւ լ ի ւ ա մ բ ։ և ա ն ա կ ա ր ի յ ա լ ։) :

Ս կ զ բ ո ւ ն ք Բ ն ա կ ա ն պ ա տ մ ո ւ թ ե ա ն (Ա լ ե ն ո ւ ր ա բ ա ն ո ւ լ ի ւ ն) :

Բ . Տ Ա Ր Ի (Բ . Կ Ա Ր Գ)

Հ ա յ կ ա բ ա ն ո ւ թ ի ւ ն (Թ ո ւ ս գ ։ յ ա շ կ ա ր հ ա գ ա մ ա ւ ։ ի գ ր ա բ ա ն ։ ը ն ո ւ ր յ ա լ ։ ը ն ո ւ ր յ ա լ ։ մ ա պ ե ն ա գ ր ա ց ։ Ա ս պ ո ւ ս գ ա ն ։ լ ա յ լ ։) :

Պ ա տ մ ո ւ թ ի ւ ն (Մ ի ջ ի ն ո ւ ր ո ւ ։ հ ա ն ո ւ ր յ ա լ ։ ա շ կ ա ր հ ա գ ր ո ւ լ ի ւ ա մ բ ։) :

Ս կ զ բ ո ւ ն ք Ք ա ն ա կ ա գ ի ս ո ւ թ ե ա ն (Ե ր կ ա ս գ ա ն ո ւ լ ի ւ ն ։ և չ ն ա ր կ ա կ ի ։) :

Ա շ խ ա ր հ ա գ ր ո ւ թ ի ւ ն (Շ ա ր ։ Ա . պ ա ր ո յ) :

Լ ե զ ո ւ ա գ ի ս ո ւ թ ի ւ ն ք

Տ ա ճ ի ւ ն (Շ ա ր ։ Ա . պ ա ր ո յ , Ք ա ղ ա յ ի պ օ ւ ։ և լ ա ր գ ի մ ա ։ օ ւ ։ և լ ա ր գ ի մ ա ։ ն ո ւ լ ի ւ ն) :

Գ ա ղ ի ւ ն (Ո ւ շ լ ա գ ր ո ւ լ ի ւ ն ։ և ք ե ր ա կ ա ն ո ւ լ ի ւ ն Ա . Տ ա ս հ ա ն ո ւ ր յ ա լ ։ ի լ ո ւ ր ո ւ լ ի ւ ա մ բ ։ և լ ա ր գ ի մ ա ն ո ւ լ ի ւ ն) :

Ս կ զ բ ո ւ ն ք Բ ն ա կ ա ն պ ա տ մ ո ւ թ ե ա ն (Բ ո ւ ս բ ա ն ո ւ լ ի ւ ն) :

" Բ ն ա գ ի ս ո ւ թ ե ա ն :

" Տ ա ր ր ա գ ի ս ո ւ թ ե ա ն :

Գ . Տ Ա Ր Ի (Գ . Կ Ա Ր Գ)

Հ ա յ կ ա բ ա ն ո ւ թ ի ւ ն (Շ ա ր ։ Ք է ր ծ ա ն ո ւ լ ի ւ ն ։ ը ն ո ւ ր յ ա լ ։ մ ա պ ե ն ա գ ր ա ց ։ Շ ա ր ա բ ա ն ո ւ լ ի ւ ն) :

Պ ա տ մ ո ւ թ ի ւ ն (Ն ո յ ա ղ ի ա յ ։) :

Ս կ զ բ ո ւ ն ք Ք ա ն ա կ ա գ ի ս ո ւ թ ե ա ն (Շ ա ր ։ Հ ա ն ր ա հ ա լ ո ւ ։ և ե ր կ ։ ը ն ո ւ ր յ ա լ ։ լ ի ւ ա մ բ ։ Ե ր ա ն ի ւ ։ և ն ո ւ ր յ ա լ ։ վ ա շ կ ա ր ի ս ո ւ թ ե ա ն ։ ո ւ շ լ ա գ ր ո ւ լ ի ւ ն ։ և շ կ ա ր ի ս ո ւ թ ե ա ն ։ ո ւ շ լ ա գ ր ո ւ լ ի ւ ն) :

Ա շ խ ա ր հ ա գ ր ո ւ թ ի ւ ն (Տ է ր է ր ա գ ր ո ւ լ ի ւ ն) :

Լ ե զ ո ւ ա գ ի ս ո ւ թ ի ւ ն ք

Տ ա ճ ի ւ ն (Շ ա ր ։ Բ . պ ա ր ո յ ։ և ն ա մ ա կ ա գ ր ա ց ։ լ ի ւ ա մ բ ։) :

Գ ա ղ ի ւ ն (Ո ւ շ լ ա գ ր ։ Ք է ր ա կ ա ն ո ւ լ ի ւ ն ։ Բ . Տ ա ս հ ա ն ո ւ ր յ ա լ ։ ի լ ո ւ ր ո ւ լ ի ւ ա մ բ ։ Ա լ ե ր ա ն ։ լ ա յ լ ։ Ա ս պ ո ւ ս գ ա ն ։ լ ա յ լ ։) :

Ս կ զ բ ո ւ ն ք Բ ն ա կ ա ն պ ա տ մ ո ւ թ ե ա ն (Ե ր կ ա ս գ ա ն ո ւ լ ի ւ ն) :

" Բ ն ա գ ի ս ո ւ թ ե ա ն (Շ ա ր ։ Բ . պ ա ր ո յ) :

Տ ա ր ր ա գ ի ս ո ւ թ ե ա ն (Հ ա ն ր ա հ ա լ ո ւ ։ գ ի ր ա կ ա ր ի ս ո ւ թ ե ա ն ։ ո ւ շ լ ա գ ր ո ւ լ ի ւ ն) :

Յ ո մ ա ր ա կ ա մ ո ւ թ ի ւ ն :

Դ . Տ Ա Ր Ի (Դ . Կ Ա Ր Գ)

Հ ա յ կ ա բ ա ն ո ւ թ ի ւ ն (Շ ա ր ։ Դ . պ ա ր ո յ ։ և գ ր ա գ ի ս ո ւ թ ե ա ն ։) :

Պ ա տ մ ո ւ թ ի ւ ն (Ք ա ղ ա ք ա կ ա ն ո ւ ր ո ւ ։ ի գ ր ա բ ա ն ։ ը ն ո ւ ր յ ա լ ։ օ ւ ։ պ ա ր գ ա ն ։ լ ա յ լ ։) :

Ս կ զ բ ո ւ ն ք Ք ա ն ա կ ա գ ի ս ո ւ թ ե ա ն (Ե ր կ ա ս գ ա ն ո ւ լ ի ւ ն ։ գ լ ո ւ ։ լ ա յ լ ։ ա ն ա կ ա ր ի ս ո ւ թ ե ա ն ։ օ ւ ։ պ ա ր գ ա ն ։ լ ա յ լ ։) :

Լ ե զ ո ւ ա գ ի ս ո ւ թ ի ւ ն ք

Տ ա ճ ի ւ ն (Հ ա ն ր ա հ ա լ ո ւ ։ Ք է ր ա կ ա ն ո ւ լ ի ւ ն ։ Պ ա ր գ ա ն ։ ը ն ո ւ ր յ ա լ ։ օ ւ ։ պ ա ր գ ա ն ։ լ ա յ լ ։ Ա լ ե ր ա ն ։ լ ա յ լ ։ Ա ս պ ո ւ ս գ ա ն ։ լ ա յ լ ։) :

Գ ա ղ ի ւ ն (Վ ե ր ծ ։ ը ն ո ւ ր յ ա լ ։ մ ա պ ե ն ա գ ր ա ց ։ Բ ա ս կ ։ Ք է ր ա կ ա ն ։ լ ա յ լ ։ Պ ա ր գ ա ն ։ լ ա յ լ ։) :


Ս կ զ բ ո ւ ն ք Ա ն գ վ ե ր ե ն ի ։ ի ա մ օ ւ ի ւ ։ լ ա յ լ ։ :

Փ ի լ ի ս ո վ ա յ ո ւ թ ի ւ ն (Տ ա ր ա բ ա ն ո ւ լ ի ւ ն ։ Հ ա ն ր ա հ ա լ ո ւ ։ լ ա յ լ ։) :

Ս կ զ բ ո ւ ն ք Տ ն ա ե ս ա գ ի ս ո ւ թ ե ա ն :

Ե . Տ Ա Ր Ի (Ե . Կ Ա Ր Գ)

Հ ա յ կ ա բ ա ն ո ւ թ ի ւ ն (Շ ա ր ։ Դ . պ ա ր ո յ ։) :



Պատմութիւն (Փէլտադայո-թիւն պատմո-թիւն) :

Սկզբունք Քանակագիտութեան (Անշահական հաշիւք) :
Լեզուագիտութիւնք

Տաճկերէն (Շար. Դ. Գար-ոյ) :

Գաղլ. (" ") Լայլ :

Փիլիսոփայութիւն (Բարյական և Պատմ. փէլտադայո-թիւն) :

Սկզբունք Տնտեսագիտութեան (Շար. Դ. Գար-ոյ) :

" Մեքենաբանութեան :

Զ. ՏԱՐԻ (Զ. ԿԱՐԳ)

Շարունակական ուսմանց նախընթաց Գար-ոյ և Պատմադայո-թիւն առարկական հնար-թիւն :

Առաջին տարիէն շարունակաբար կ'աւանդուին նաև
Քրիստոնէ ական վարդապետութիւն և կրօնագիտութիւն
Հանդերձագ ատմաւթեամբ Հայաստանեաց ուղղափառ
Ա. Եկեղեցւոյ .

Բարյական՝ ազգային և ընտանեկան կրթութիւն և Ու
ողջաբանութիւն (ամեն օր Դրամական մէջ՝ Դաշտ-
իակի և ընդհանուր բառախոսութեամբ) .

Զեագրութիւն (Երիշաւական և ընդօրինակական գծագրո-թիւն,
արուեստից՝ ճանապարհ մէտենախոն-թիւն և ճարպարապետո-
թիւն վէրաբերեալ ճի-պէր. իսկ Նիւրլ-թիւն՝ յարմարա-որաց) .
Եկեղեցական Երդեցողութիւն հանդերձ ձայնագրու-
թեամբ յարմարա-որ հանկանց .

Ազգային Երդք հանդերձ ձայնագրութեամբ .

Առջնեգործութիւն (կար և ձե) աղիւնաց .

Գեղագրութիւն :

14. Պատմատութիւնք սովորաբար օր ընդ մէջ կ'ըւ-
լան, կամ շաբաթը երկիցս և կամ միանգամ ըստ յարմա-
րութեան և կարեսութեան :

Պատմութիւնք սովորաբար մէկ ժամէ ,
կամ աւելի, ըստ կարեսութեան :

→ → → → → → → → → →

Դ.

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

15. Խւրաքանչիւր Թաղական խորհուրդ իր թաղային
վարժարանաց համար առանձին Հոգաբարձութիւն կը
կազմէ, իր մէջէն կամ դրսէն և կամ խառն ընտրելով 3 էն
մինչև 5 ուսումնական և ուսումնասէր անձինք . Աղջկանց
վարժարանի խնամակալութիւնն ալ եթէ կարելի է՝ ձեւ-
ուընհաս տիկիններու կը յանձնէ, որոյ պաշտօնը յար և
նման է Հոգաբարձութեան պաշտօնին, ապա թէ ոչ՝ Հո-
գաբարձութեան տեսչութեան ներքե կը թողու :

Թաղական խորհուրդն ընտրեալ Հոգաբարձութիւնն
և խնամակալութիւնը կը ծանուցանէ տեղայն Ուսումնա-
կան խորհրդոյ, որպէս զի անոր հետ դպրոցական խնդրոց
վրայ յարտքերութիւն ունենան . (տես յօդ. 19 ըդ.՝
Թաղ. Խորհրդոց Հրահանգի) :

Եթէ որոշեալ թուէն աւելի կամ նուազ թուով ընտ-
րութիւն ընել հարկ ըլլայ, նոյնպէս եթէ խնամակալու-
թիւն ըկրնան ընտրել, պատճառներովը պէտք է ծանու-
ցանեն տեղայն Ուսումնական խորհրդոյ և անոր հաւա-
նութիւնն ստանան :

16. Հոգաբարձութիւնը կ'ընարէ Տեսուչ մը, որոյ
պաշտօնին է Ուսումնական խորհրդոց Հրահանգաց համե-
մատ՝ վարժապետաց և աշակերտաց ընթացքին և անոնց
պաշտօնին և պարտաւորութեան անթերի կատարմանը վը-
րայ հսկել, և պէտք եղած հրահանգները տալ . վարժա-
րանին բարեկարգութեանը և յառաջադիմութեան հոգ-
տանիլ և բարյական՝ ազգային և ընտանեկան կրթութեան
փոյթ ունենալ:

Տեսուչը պէտք է վկայեալը թագում իւսումնական խորհրդէն, և անոր ընտրութիւնը պիտի ծանուցուի թւսումնական խորհրդոյ :

17. Տեսուչը Հոգաբարձութեան անդամներէն ալ կըրնաց ըլլալ, իոկ եթէ դրսէն անձ մ'է, գարձեալ իրաւունք ունի Հոգաբարձութեան խորհրդոյ ներկայ գանուելու, քայց այն ատեն ձայն ունի և ոչ քու է :

18. Տեսուչը պատասխանատու է Հոգաբարձութեան :

19. Տեսչին պարտքն է սահմանել արձանագրութեան, գասախօսութեան և այլ պէտք եղած օրագրութեան տումարներ, և գասախօսութեան և այլ գործոց ժամանակաշցցը, բայց հրահանդի Աւսումնական խորհրդոյ :

20. Տեսուչը ամէն ամսու գլուխ վարժարանին բոլոր պաշտօնէից ամսական ընկալագրին ներքեւ ՚ի վարժարանին կը կնքէ նոյն վարժարանին Տեսչութեան կնքովը, և Հոգաբարձութիւնը պարտական է անմիջապէս վճարել :

21. Հոգաբարձութիւնը կ'որոշէ վարժարանին ամէն կարդի պաշտօնեայները, վարժապետք և այլն. և պարտական է Ծւրաբանչիւրին հետ իրենց պաշտօնին վերաբերեալ փոխադարձ պայմանագիրն ստորագրել:

22. Տեսուչը պարտական է ազդարարութիւն ընել վարժարանին ամէն կարդի պաշտօնէից, երբ պարտազանց գտնուին. և երկու անդամ ազդարարութիւն ընելէ վերջը կը ծանուցանէ Հոգաբարձութեան :

23. Հոգաբարձութիւնը գրով կը ծանուցանէ նոյն չանացող պաշտօնէին. որ եթէ միւնոյն ընթացքը շաւրունակէ, պիտի գաղարի իր պաշտօնէն :

Ապացուցեալ ծանր յանցանք մը ազդարարութեանց հարկ չի թողուր :

Հոգաբարձութիւնը պարտական է Աւսումնական խորհրդոյ տեղեկագիր տալ արձակեալ պաշտօնէից նկատմամբ :

24. **Այցելու** հեւը մը Տեսչին կամ անոր որոշմամբը ուրիշ պաշտօնէի մը ընկերութեամբ կընայ այցելութիւն

ընել վարժարանին, առանց խանգարման և շփոթութեան տեղի տալու :

Իսկ աղջկանց վարժարանի այցելութեան համար պէտք է Հոգաբարձութեան կամ Խնամակալութեան կողմէն՝ եթէ ունի՝ արտօնութիւն ստանալ կանխաւ :

25. **Եկեղեցական** հարք, Թաղական խորհրդոյ անդամք և ուրիշ ազգային պաշտօնատարներ կընան այցելութիւն ընել ազգային վարժարանաց. և եթէ դիսողութիւն ունին՝ բանիւ կամ գրով կ'ուղղեն առ Տեսուչի կամ առ Հոգաբարձութիւնն :

26. **Կրօնական** ժողովոյ և Աւսումնական խորհրդոյ անդամք միշտ իրաւունք ունին այցելութիւն ընելու ազգային վարժարանաց, և եթէ դիտողութեան արժանի կէտնչմարեն, բացատրութիւն պահանջնելու Տեսչին կամ Հոգաբարձութենէն և կամ Խնամակալութենէն :

27. **Կրօնական** ժողով, Աւսումնական խորհրդոյ, Թաղական խորհրդոյ և նոյն իսկ Հոգաբարձութիւն եթէ պէտք ունենան վարժարանին աշակերտաց որ և է կարգի ուսումնական վիճակը քննել և հասկընալ, կամ անձամբ և կամ իրենց կողմանէ գրով ներկայացեալ քննչաց միջոցաւ, Տեսուչը պարտական է նոյն կարգին քննութիւնը կատարել տալ իր կամ գասատուին ներկայութեանը :

28. Հոգաբարձութիւնը արտօնագիր կուտայ նորեկ աշակերտի մը :

29. **Այրեկ** աշակերտը իւր ձեռքը պիտի ունենայ իւր ծննդեան և մկրտութեան վկայագիրը. և եթէ ուրիշ վարժարանէ կուտայ, նոյն վարժարանին Հոգաբարձութեան կամ Տեսչին ծանուցագիրը :

Հոգաբարձութիւն կամ Տեսուչ պարտական է հրաժարազ աշակերտի մը ծանուցագիր տալ անոր ուսմանց և այլ վիճակին վրայ :

30. Հոգաբարձութիւնը պիտի ջանայ որ յաջողակ աշակերտներու համար քիչ պատահի այս տարաժամ հրաժարումը, աղքատները խնամելով ըստ կարել ոյն :

31. Հոգաբարձութիւնը ըստ պատշաճի պէտք է ո՞ք ուսմանց ընթացքը լրացնող կամ լրացնելու վրայ եղող յարմարաւոր աշակերտներէն դասակրկնիչ կամ դաստուի օգնական դնէ արժան տեսած կարդերուն հաշմար :

32. Ծնողը իրենց բողոքը կամ գանդատը կանոնաւոր կերպով կ'ուղղեն Տեսչին . և եթէ Տեսչին համար է՝ Հոգաբարձութեան , և եթէ Հոգաբարձութեան համար է՝ կամ Թաղական խորհրդոյ և կամ Ուսումնական խորհրդոյ :

33. Աշակերտ մը եթէ խնդիր մ'ունենայ , խնդրագրով կը դիմէ Տեսչին :

Իներկայութեան աշակերտաց որ և է հրահանգ չի տրուիր վարժապետի , կամ այլ պաշտօնէի մը :

34. Տեսչին պարտքն է աշակերտաց ուսմանց և վարուց վիճակը միշտ քննել և պատւց արժանիները պատուել , և պատժոյ արժանիները պատժել :

Պատիւներն են

Ա . Օրագրութեանց մէջ բարի նիշ դնել ,
Բ . Իներկայութեան աշակերտաց գովեստ կարդալ ,
Գ . Իներկայութեան Հոգաբարձութեան կամ թաղական խորհրդոյ և կամ այլ ազդային այցելուաց գովեստ կարդալ ,

Դ . Գովեստից վկայական տալ առ ծնողս ուղղեալ ,
Ե . Ուսումնական խորհրդոյ ծանուցանել ,
Զ . Ուսումնական խորհրդէն պատուագիր առնուլ :

Պատիւներն են

Ա . Օրագրութեանց մէջ յուրի նիշ դնել ,
Բ . Առանձին խրատ լսել Դաստիարակէն ,
Գ . " " " " Տեսչին .
Դ . Հրապարակաւ " " "

Ե . Հոգաբարձութեան ներկայութեանը խրատ լսել , և իմաց տալ ծնողաց :

Զ . Արտաքսել վարժարանէն կամ առժամանակեայ և կամ մշտնջենապէս :

Թաէ Ցեսուչը և թէ Վարժապետը պարտական են այս սկզբանց համեմատ վարուիլ , և ողջպահիկ կանոնաց հակառակ սյատժական միջոցներու երբէք չ'դիմել , և զգուշանալ աղջայքն ահաբեկ ընելու ամէն ձևերէն :

35. Ազգային վարժարանները պէտք է որ բացուին կիւրակէ օրերը և կամ ձմրան գիշերները թաղին կամ գիւղին չափահաս և ուսումնատենչ անձանց համար , և ուսմանք ըստ կարգի պիտի աւանդուին անոնց վիշտակին և պիտոյից համաձայն :

Հոգաբարձութիւնը պարտական են այս մասին ամէն հոգ տանելու , մանաւանդ գաւառաց գիւղորէից մէջ , և այս նպատակին համար կազմուած ընկերութիւնները քաջալերելու :

36. Հոգաբարձութեանց և Խնամակալութեանց պաշտօնին վերաբերեալ ուրիշ մասերը կը պարունակին Թաղական խորհրդէն Հրահանդին մէջ (տես յօդ . 37-56 բդ .) :

Ե.

ՎԱՐԺԱՊԵՏՔ

37. Մայրաբաղաբիս մէջ Դաստիառ ութիւն , Դաստիառակութիւն (կառավարչութիւն) և Մանկավարժութիւն ընող Վարժապետները պէտք է որ վկայագիր ունենան ՚ի ձեռին , տուեալ կեդրոնական Վարչութեան Ուսումնական խորհրդէն , և վաւերացեալ Ս. Պատրիարքէն՝ հաւանութեամբ Կրօնական և Քաղաքական ժողովոց :

38. Իւրաքանչիւր առաջնորդ ական վիճակի մէջ գըտնուած վարժապետը պէտք է որ վկայագիր ունենան գաւ-

ւառին Ուսումնակաս խորհրդէն և վաւերացեալ Ա. Առաջնորդէն՝ հաւանութեամբ կրօնական և Քաղաքական ժողովոց գաւառին :

39. Կ. Պոլսէն ՚ի գաւառ , կամ մէկ գաւառէ ՚ի միւս գաւառ գնացող վարժապետները պարտական են իրենց ձեռքը վկայագիր ունենալ :

40. Առանց վկայագրի վարժապետ մ'անընդունելի է . և եթէ Հոգաբարձութիւն մը զանի ընդունի , պատասխանառու պիտի մնայ :

41. Խւրաքանչիւր վարժապետ իւր պաշտօնին հետ Հոգ պիտի ունենայ նաև աշակերտաց բարոյական՝ աղքաւ յին և ընտանեկան կրթութեանը և բարի զգացմանց բարդաւճմանը . հետեաբար ինքը՝ վարժապետն ալ բարի վարուք՝ ազգասիրութեամբ և ողջմութեամբ ծանուցեալ , և գործով բարի օրինակ պիտի ըլլայ աշակերտացը :

42. Օտար լեզուաց և արտաքին ուսմանց դասատուները ՚ի հարկին կրնան օտարազգի կամ այլադաւան ըլլալ . բայց վկայեալ պիտի ըլլան իրենց դաս տուած ուսմանց և բարի վարուց մասին . և աշակերտաց կրօնական՝ բարոյական և ազգային զգացմանց վնասակար դիտում կամ հանգամանք պիտի չունենան :

43. Վարժապետ մը իր որոշեալ ժամուն պարտի անխափան ներկայ գտնուիլ վարժարանի մէջ :

Ստիպողական բանաւոր սպատճառաւ մը եթէ բացակայ մնայ , պարտական է ծանուցանել Տեսչին :

Այսպիսի բացակայութիւն մը Տեսչին հաւանութեամբը կրնայ արդարանալ :

44. Վարժապետ մը իր պաշտօնավարութեան մէջ ուրեց զբաղմունք պիտի չ'ունենայ :

45. Դասատուին պարտըն է աւանդելի դառը կանխաւ պատրաստել , և դիւրուսոյց եղանակաւ տւանդել , աշակերտաց հասակին և կարողութեանը համեմատ . և անմիջապէս ստուգել աշակերտաց հասկցած և ուսած ըլլալ :

46. Ուսմանց դասագրքերը կեդրոնական վարչութեան Ուսումնական խորհրդոյ գիտութեամբն ու հաւանութեամբը պիտի գործածուին , որոնց ցանկը հրատարակուած պիտի ըլլայ :

47. Դասատուն պիտի նշանակէ իր օրագրութեան մէջ աւանգած գաւոր և պիտի ստորագրէ . նցնպէս պիտի նշանակէ հարցուած աշակերտին կարողութեան աստիճանը յատուկ նիշելով :

48. Օրագրութեանց մէջ թէ դասատուաց և թէ դաստիարակաց գործածելիք նիշելը պիտի ըլլան հետեւեալ թուանշանները , որոնց կարողութիւնն ալ դիմացը նշանակուած է :

0	անպիտան
1	
2	տկարագոյն
3	
4	
5	տկար
6	
7	
8	միջակ
9	
10	
11	լաւ
12	
13	
14	լաւագոյն
15	
16	
17	քաջալաւ
18	

19 { յցժքալաւ (պահելի նիւթը)

Բ. — Բացակայ եղող աշակերտաց համար
Հ. — Հիւանդ " " "

49. Դաստիարակը անդուլ պիտի հսկէ աշակերտաց վարուց և աշխատասիրութեան և մաքրութեան վրայ , և ըստ ժամանակացուցին պիտի վարուի :

50. Ամէն առաւօտ աշակերտները Ս. Եկեղեցւոյ մէջ պէտք է որ հաւաքուին (Եթէ վարժարանը Ս. Եկեղեցւոյ մօտէ) . և յետոյ դաստիարակին առաջնորդութեամբ վարժարան կ'երթան , ուր սովորական ազօթքնին կ'ըսեն , ինչպէս նաև կիսաւուր ձաշէն յառաջ և յետոյ՝ և երեկցեան արձակման համար սահմանեալ ազօթքները պիտի ըսեն որոշեալ ժամանակին :

Այս ազօթքները իրենց եղանակներովը կանխաւ սահմանուած պիտի ըլլան կ'օնական ժողովին :

51. Դաստիարակը պիտի ունենայ Օրագրութեան տետրը մը , որուն մէջ պիտի նշանակէ աշակերտաց բացակայութիւնը և անոնց վարուց նիշերը :

Պիտի ունենայ ուրիշ տետր մ'ալ , յորում պիտի արձանագրէ :

Նորեկ և հրաժարեալ աշակերտները ,

Պատոյ և պատժոյ արժանի աշակերտները . որոնք Տեսչին կամ Հոգաբարձութեան պիտի ներկայանան :

Դասատուաց բացակայութիւնը կամ ներկայութիւնն ըստ որոշեալ ժամուն .

Պաշտօնական կամ անպաշտօն անձանց այցելութիւնները .

Վարժարանին մէջ տեղի ունեցած նշանակութեան արժանի դէպքերը , Տեսչին խորհրդով :

52. Դաստիարակը պիտի ունենայ նաև տետր մը , յորում պիտի արձանագրուին աշակերտք , վարժարան մտած

օրերնուն կարդաւը . հօր անուամբ և արհեստով , մականուամբ , ծննդեան թուականաւ և ուսման վիճակաւ .

Սոյն արձանագրութեան տումարին մէջ կ'արձանագրուի նաև աշակերտին հրաժարումն իր թուականաւը և ուսման վիճակաւը :

53. Տարւոյն հինգ տաղաւարներուն մանաւանդ Ս. Զատիկի , Ծննդեան և վերափոխման տաղաւարներուն , դաստիարակը որոշեալ աւուր մէջ աշակերտները Ս. Եկեղեցի կ'իջեցնէ ՚ի խոստովանութիւն , և խոստովանահօր որոշած օրը աշակերտք կը մասնակցին Ս. Հաղորդութեան .

54. Խոստովանութեան օրէն մինչև Ս. Հաղորդութեան մասնակցելու օրը , աշակերտք պարտական են Հոգեւոր պատրաստութեանց ալ պարապիլ :

55. Մանկավարժ կ'ըսուին ոչ միայն Ընտելարանի յատուկ դասատուք և դաստիարակք , այլ և Նախակրթարանի բոլոր դասատուք և դաստիարակք . Հետեաբար ասոնցմէ հմտութիւն կը պահանջուի ոչ միայն իրենց աւանդած դասերուն չափ , այլ նոյն զ ասերուն բարձրագոյն աստիճանին չափ ալ . և դաստիարակութեան ոգւոյն տեղեակ , և աշակերտաց հետ վարուելու և ուսմունքը անոնց քաղցրացնելու և բարի կը թութիւն մը տալու ձեռնհասըլլալու են :

56. Ազգային վարժարանաց Հոգաբարձութեանց և Խնամակալութեանց առաջին և գլխաւոր պարտքն է Ընտելարաններն ու Նախակրթարանները այս կարգի բազմահմուտ մանկավարժից խնամոց յանձնել , և այս մասին ՚ի սրտէ հոգ ունենալ ամէն ուրիշ պիտոյքներէ աւելի :

57. Եթէ թաղի կամ գիւղի մը մէջ Ընտելարաններ բացուած կան ազգային վարժարաննէն դուրս , Հոգաբարձութիւնք կամ առաւել Խնամակալութիւնք պարտական են Հոկել անոնց վրայ , որ յաջողակ և վկայեալ մանկավարժներու , մանաւանդ մանկավարժուհիներու խնամոց ներքե ըլլան :

58. Ընտեղարանաց մէջ ձանձրացուցիչ եղանակներէ զդուշանալու համար հարկ է որ ժամերը մերթ ուսման և մերթ դրօսանաց համար բաշխուին :

59. Տնտեղները, տնտեսուհիները և այլ սպասաւորները պէտք է որ բարի զգացմանց և վարուց տէր և ծնողական գութ ունեցող՝ ծանուցեալ կամ վկայեալ անձինը ըլլան :

Զ.

ՔՆՆՈՒԹԻՒՆ

60. Դասատուները չորս ամիսն անդամ մը (ֆետրվարի, Յունիսի և Հոկտեմբերի սկիզբը) օրական քննութեանց մասին խրաբանչիւր աշակերտի օրադրաւթեանց մէջ ստացած նիշերուն միջին թիւը կը գտնեն, որ աշակերտին կարողը թեան աստիճանը կը ցուցնէ, և ցուցակով մը կը յանձնեն ցեսչին :

61. Դաստիարակներն ալ՝ նոյնպէս չորս ամիսն անդամ մը՝ իրենց օրագրութեան համեմատ՝ խրաբանչիւր աշակերտի վարուց միջին թիւը կամ աստիճանը կ'որոշեն և ցուցակով մը կը յանձնեն ցեսչին :

62. Դասատուները նաև չորս ամիսն անդամ մը քըննութիւն կ'ընեն նախընթաց ամսոց մէջ աւանդած դասերուն վրայ և առանձինն կը նշանակեն օրագրութեան մէջ :

63. Հոկտեմբերի քննութիւնները տարեկան կը համարուին, և այս քննութեանց ներկայ կրնան գտնուիլ Հոգաբարձութեան, Թաղական խորհրդոյ, Ուսումնական խորհրդոյ և Կրօնական ժողովոյ անդամք և քննութեան համար ուրիշ հրաւիրեալ անձինք :

64. Տեսուչը կը հաւաքէ օրագրութիւնները և քննութեանց ցուցակները, և կ'արձանագրէ վիճակոց բուժորի մը մէջ և կը ներկայացնէ Հոգաբարձութեան :

65. Հոգաբարձութիւնը վիճակացոյց տումարին համեմատ իւրաքանչիւր աշակերտի վիճակը կը նշանակէ վիճակացոյց թղթի մէջ, և վարժարանին կնքովը կը կնքէ և կը զրկէ իւրաքանչիւր աշակերտի ծնողաց :

66. Վիճակացոյց տումարին համեմատ ցուցակ մ'ալ շինուելով պիտի կախուի վարժարանին սրահին մէջ մինչև յաջորդ քննութիւն, և անոր մէկ օրինակին ալ Ուսումնական խորհրդոյ պիտի հաղորդուի :

67. Ուսումնական խորհուրդն ինք՝ կամ իր ընտրած անձանց միջոցաւ կը քննէ Ուսումնականի ուսմանց ընթացքը լրացնող աշակերտները :

Այս քննութիւնները կարգով մը Հոկտեմբերի մէջ կ'ըսկըսին ու կ'աւարտին, և Ուսումնական խորհրդը վկայագիր կուտայ ուսմանց ընթացքը լրացնող աշակերտաց :

68. Այս մը 1 գպրացական նոր տարին կ'ակսի, և այս միջոցին Հոգաբարձութիւնը կ'ընէ բոլոր կարգերուն փոփոխութիւնը՝ Տեսչին խորհրդով :

Եթէ աշակերտ մը իր քննութիւնները գոհացուցիչ կերպով անցուցած չէ, գարձեալ իր նախկին կարգին մէջ կը մնայ :

69. Աշխակը թարանի ընթացքը լրացնող աշակերտները յետ քննութեան կ'անցնին Ուսումնարանը, և ասոնց վիճակացոյցը ընդհանուր տեղեկագրով մը Հոգաբարձութիւնը պիտի ներկայացնէ Ուսումնական խորհրդոյ :

70. Հոգաբարձութիւնը պէտք է որ նախակը թիւնն աւարտող աշակերտաց ծնողքներէն կանխաւ ապահովութիւն ստանայ, Ուսումնարանի գոնէ առաջին երեք տարիներուն շրջանն իրենց զաւակաց անխափան լրացնել տալու :

71. Ամէն ազգային վարժարան կրնայ տարեկան հանգէստ կատարել ըստ սովորութեան, և Թաղական խորհրդութիւն հանդիսին կը հրաւիրէ Եկեղեցական հարք, ուսումնաց ծնողքը և այլ ազգայինք :

Հոգաբարձութիւնը հանդիսականաց՝ կը ներկայաւցնէ վարժարանին թէ բարոյական և թէ նիւթական վիճակը, և ուսանողաց վիճակացոց տեղեկագիրը : Եւ եթէ պատշաճ դատուի՝ մասնաւոր քննութիւն մալընելէ յետոց՝ ուսանողները բարոյապէս կամ նիւթապէս կը վարձատրուին :

Այս հանդէսները սովորաբար կը կատարուին յետաւարաման տարեկան քննութեանց :

72. Այն վարժարանները որոնք սովորաբար արձակուրդ կ'ընեն, Յուլիոի 15 էն մինչև Յուլիոի վերջը կրնան ընել, կամ բոլորովին և կամ մասամբ :

ՀՀ Ազգային գրադարան



NL0257035

